ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2026 թվականի թիվ 346 – Ա

«ԳՈՐԻՍԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ՄԱՐԶԱԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՏԻԳՐԱՆ ԱՂԱԲԵԿՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԱՐՁԱԿՈՒՐԴԻ ՄԻ ՄԱՍԸ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՆՐԱ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ ՆՈՒՅՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՈՒՍՄԱՍՎԱՐ ՌՈՒԶԱՆՆԱ ԲԱՂԴԱԳՅՈՒԼՅԱՆԻՆ ՎԵՐԱՊԱՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով և 16-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 158-րդ, 159-րդ և 163-րդ հոդվածներով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասով և հիմք ընդունելով «Գորիսի տարածքային մանկապատանեկան մարզադպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Տ. Աղաբեկյանի 2026 թվականի հուլիսի 15-ի դիմումը՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԵՄ.

1. «Գորիսի տարածքային մանկապատանեկան մարզադպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Տիգրան Աղաբեկյանին 2026 թվականի օգոստոսի 1-ից 18-ը ներառյալ տրամադրել 2025-2026 թվականների աշխատանքային տարվա իր ամենամյա նվազագույն արձակուրդի մի մասը՝ 15 աշխատանքային օր:

2. Արձակուրդում գտնվելու ընթացքում «Գորիսի տարածքային մանկապա-տանեկան մարզադպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի

ժամանակավոր պաշտոնակատարի պարտականությունների կատարումը վերապահել նույն կազմակերպության ուսմասվար Ռուզաննա Բաղդագյուլյանին:

3. Տիգրան Աղաբեկյանին աշխատանքի մեջ համարել 2026 թվականի օգոստոսի 19-ից:

2026-07-21 16:40:18 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ՀՀ Սյունիքի մարզպետ Ռ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

2026թ. հուլիսի 21
ք. Կապան